

Դատական Գործ N: ԵԱՆԴ/0587/02/09

Հայցադիմումը /դիմումը/ ստացվել է:	13-05-2009
Հայցվոր/դիմող	
Անուն:	<<Գրանդ Քենդի>> հայ-կանադական ՀՁ ՍՊԸ
Հասցե:	ք.Երևան
Պատասխանող	
Անուն:	<<Արայիկ Էլիզա>> ՍՊԸ
Հասցե:	ք.Երևան, Ավան Չարենցի թաղ. 29շ.բն.31
Քաղաքացիական գործի ստացման կարգը:	Առաջին անգամ
Ինքնուրույն պահանջ ներկայացնող:	
3-րդ անձ	
Անուն	
Ազգանուն	
Հասցե	
Պահանջ:	Ապրանքային նշաների ապօրինի օգտագործումը օգտագործումը դադարեցնելու և ապօրինի օգտագործվող ապրանքային նշաններով մակնիշված ապրանքի փաթեթի ամբողջ ծավալը ոչնչացնելու պահանջի մասին
Հիմնական պահանջի վիճակագրության տողի համարը:	13
Պետական տուրք:	0
Պատասխանի ստացման ամսաթիվը:	
Հակընդդեմ հայցի ներկայացման ամսաթիվը:	
Հակընդդեմ պահանջ:	
Պետական տուրք:	
Ամսաթիվ:	13-05-2009
Նախագահող դատավոր	
Դատարանի անվանում:	Ավան և Նոր-Նորք
Դատավորի անուն:	Արսեն Արտուշի Բաբայան
Դատավոր	
Դատարանի անվանում:	Ավան և Նոր-Նորք
Դատավորի անուն:	
Որոշման ամսաթիվ:	13-05-2009

Դատաքննության ամսաթիվ:	11-06-2009
Դատաքննության ամսաթիվ:	29-06-2009
Դատաքննության ամսաթիվ:	29-07-2009
Ծանուցագիրը ուղարկվել է:	13-05-2009
Այլ նշումներ:	
Ժամ:	17:00
Հայցի լուծման ամսաթիվ:	29-07-2009
Հայցի լուծումը:	Բավարարվել է
Հոդված	
Հոդված	1171
Հոդված	
Հոդված	1172
Հոդված	
Հոդված	1178
Հոդված	
Հոդված	92
Հոդված	
Հոդված	47
Հոդված	
Հոդված	4
Հոդված	
Հոդված	130
Հոդված	
Հոդված	131
Հոդված	
Հոդված	132
Հոդված	
Հոդված	140
Հակընդդեմ հայցի լուծումը :	
Հակընդդեմ հայցի լուծման ամսաթիվ:	
Այլ նշումներ:	
Դատական ակտ (վճիռ, որոշում):	գործ թիվ ԵԱՆԴ /0587/02/09 Վ Ճ Ի Ռ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ «29» հուլիսի 2009թ. ք. Երևան Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք համայնքների ընդհանուր իրավասության դատարանը նախագահությամբ դատավոր՝ Արսեն Բաբայանի քարտուղարությամբ՝ Կարինե Ասատրյանի մասնակցությամբ

հայցվոր՝ «Գրանդ Քենդի» հայ-կանադական համատեղ ձեռնարկություն ՍՊԸ-ի /ՀՎՀՀ՝ 02226764, պետ. գրանցման վկայական՝ 02 Ա թիվ 047699, հասցեն՝ ք. Երևան, 0061, Մասիսի փող 31/ հայցվորի ներկայացուցիչ՝ Լիլիթ Ակոպովայի /անձնագիր՝ AB 0490364, տրված 17.12.1996թ.-ին, 007-ի կողմից/ պատասխանող՝ «Արայիկ Էլիզա» ՍՊԸ-ի /պետ. գրանցման վկայական՝ 03 Ա -074928, գրանցված է՝ 02.03.2007թ., ծածկագիր /կող/ 39218502, գրանցման համարը 282.110.05720, հասցեն՝ ք. Երևան, Ավան, Չարենցի թաղ. 29-31/ պատասխանողի ներկայացուցիչ՝ Զոհրաբ Կառլենի Աթոյանի /անձնագիր՝ AF 0612286, տրված 20.11.2002թ.-ին, 022-ի կողմից, հասցեն՝ ք. Երևան, Ավան, Չարենցի թաղ. 29շենք, բն. 31/

դռնբաց դատական նիստում քննելով քաղաքացիական գործն ըստ հայցի «Գրանդ Քենդի» հայ-կանադական ՀՁ ՍՊԸ-ի /այսուհետ նաև հայցվոր/ ընդդեմ «Արայիկ Էլիզա» ՍՊԸ-ի /այսուհետ նաև պատասխանող/՝ ապրանքային նշանների ապօրինի օգտագործումը դադարեցնելու և ապօրինի օգտագործվող ապրանքային նշաններով մակնիշված ապրանքի փաթեթի ամբողջ ծավալը ոչնչացնելու պահանջի մասին

Պ Ա Ր Զ Ե Ց

Հայցվոր կազմակերպությունը, դիմելով դատարան, խնդրել է պարտավորեցնել պատասխանողին դադարեցնել «Գրանդ Քենդի» հայ-կանադական ՀՁ ՍՊԸ-ին բացառիկ իրավունքով պատկանող 7640, 8681, 9424 գրանցման համարներն ունեցող ապրանքային նշանների հետ նույնական կամ շփոթելու աստիճան նման «Ձյունիկ» նշանի ապօրինի օգտագործումը և առանց որևիցե փոխհատուցման ոչնչացնել ապօրինի օգտագործվող «Ձյունիկ» նշանով մակնիշված ապրանքի փաթեթի /տուփերի / ամբողջ ծավալը :

1. Գործի դատավարական նախապատմությունը

Հայցվոր կազմակերպությունը հայցադիմումը դատարան է ներկայացրել 11.06.2007թ.-ին և հայցադիմումը ՀՀ Տնտեսական դատարանի կողմից ընդունվել է դատարանի վարույթ՝ 13.06.2007թ.-ին /գործ Տ-2148 – 2007/:

Պատասխանողի կողմից հայցադիմումի պատասխան կամ հակընդդեմ հայց դատարան չի ներկայացվել: 09.07.2007թ.-ին ՀՀ Տնտեսական դատարանի որոշմամբ հայցը թողնվել է առանց քննության: 22.04.2009թ.-ին հայցվորը դիմում է ներկայացրել ՀՀ դատական դեպարտամենտին՝ գործի վարույթը վերսկսելու մասին: Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 13.05.2009թ. որոշմամբ քաղաքացիական գործի վարույթը վերսկսվել է: 29.06.2009թ. դատական նիստում, դատարանը պարզեց, որ հայցվորի կողմից ներկայացված հայցի առարկան է հանդիսանում «Գրանդ Քենդի» հայ-կանադական ՀՁ ՍՊԸ-ին բացառիկ իրավունքով պատկանող 7640, 8681 և 9424 գրանցման համարներն ունեցող ապրանքային նշանների ապօրինի օգտագործումը պատասխանող ընկերության կողմից դադարեցնելու և ապօրինի օգտագործվող ապրանքային նշաններով մակնիշված ապրանքի փաթեթի /տուփերի/ ամբողջ ծավալների ոչնչացումը:

Գործը նախապատրաստվել է դատաքննության՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 222 գլխի կանոնների համաձայն:

2. Հայցվորի իրավական դիրքորոշումը

Հայցվորը դիմելով դատարան հայտնել է, որ «Գրանդ Քենդի» հայկանադական համատեղ ձեռնարկություն սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության տարածքում ԱՇՄԴ-ի 30-րդ դասի բոլոր ապրանքների համար գրանցված հետևյալ ապրանքային նշանների սեփականատերը, ինչը հավաստում է ՀՀ Ստավոր սեփականության գործակալության կողմից տրված թիվ 8681, 7640 և 9424 վկայագրերով, համապատասխանաբար ապրանքային նշանը, տեսակը՝ 1-ին «Ձյունիկ» /բառային/, նշանի առաջնությունը՝ 02.06.2004թ., 2-րդ «Ձյունիկ» /համակցված/, նշանի առաջնությունը՝ 19.05.2003թ., 3-րդ «Ձյունիկ» /համակցված/, նշանի առաջնությունը՝ 23.12.2004թ. :

Հայցվորը հայտնել է նաև, որ պատասխանողի կողմից թողարկվող արտադրանքի՝ քաղցրավենիքի տուփերի /փաթեթների/ ձևավորման ընթացքում ոչ իրավաչափորեն օգտագործվում է «Գրանդ Քենդի» հայկանադական ՀՁ ՍՊԸ-ին պատկանող վերը նշված ապրանքային նշանների հետ նույնական կամ շփոթելու աստիճանի նման «Ձյունիկ» նշանը, ինչը հաստատվում է շուկայում համապատասխան ապրանքի առկայությամբ: Նշված հանգամանքը իրենց ընկերության կողմից դիտարկվում է, որպես ապրանքային նշանի նմանակում և ապօրինի օգտագործում:

«Ապրանքային նշանների և ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ ՀՀ-ում ապրանքային նշանին իրավական պահպանություն տրամադրվում է օրենքով սահմանված կարգով դրա պետական գրանցման ուժով :

Ապրանքային նշանի նկատմամբ իրավունքը պահպանվում է օրենքով: Իսկ վերը նշված օրենքի 4-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ ապրանքային նշանի նկատմամբ բացառիկ իրավունքը ծագում է դրան իրավական պահպանություն տրամադրելու պահից և պատկանում է դրա սեփականատիրոջը, որն էլ ունի այն տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու, ինչպես նաև այլ անձանց կողմից դրա օգտագործումն արգելելու բացառիկ իրավունք: Առանց ապրանքային նշանի սեփականատիրոջ թույլտվության ոչ ոք իրավունք չունի օգտագործել Հայաստանի Հանրապետությունում պահպանվող ապրանքային նշանը: Ընդ որում, գրանցված ապրանքային նշանի սեփականատերը բացառիկ իրավունք ունի երրորդ անձանց առևտրային գործունեության ընթացքում արգելել առանց իր թույլտվության ապրանքային նշանի կամ դրանով նշված ապրանքի պատրաստումը, կիրառումը, ներմուծումը, վաճառքը և դրա առաջարկը, ինչպես նաև այլ ձևերով տնտեսական շրջանառության մեջ մտնելը կամ այդ նշանով նշված ապրանքի կամ ապրանքային նշանի նույն նպատակով պահեստավորումը, եթե այդ ապրանքային նշանին և օգտագործված է այն ապրանքների նկատմամբ, որոնց համար գրանցված է իր ապրանքային նշանը: Հայտնել է նաև, որ ապրանքային նշանի սեփականատիրոջ բացառիկ իրավունքի խախտում /ապրանքային նշանի ապօրինի օգտագործում / է համարվում առանց նրա թույլտվության Հայաստանի Հանրապետության տարածքում քաղաքացիական շրջանառության մեջ ապրանքային նշանի կամ դրան շփոթելու աստիճան նման նշանի օգտագործումն այն ապրանքների համար, որոնց անհատականացման համար գրանցված է ապրանքային նշանը, այդ թվում՝ ապրանքային նշանի կամ դրան շփոթելու աստիճան նման նշանի կիրառումը /զետեղումը/ ա/ ապրանքների, պիտակների, այդ ապրանքների փաթեթավորման վրա, եթե այդ ապրանքներն

արտադրվում են, վաճառվում են կամ վաճառքի են առաջարկվում, ցուցադրվում են ցուցահանդեսներում կամ տոնավաճառներում կամ ՀՀ-ում քաղաքացիական շրջանառության մեջ են դրվում այլ եղանակներով կամ պահպանվում /պահեստավորվում/ են և /կամ/ այդ նպատակով տեղափոխվում կամ ներմուծվում են Հայաստանի Հանրապետություն ո/ ապրանքների գովազդներում և վաճառքի առաջարկներում: Ընդ որում, ապրանքները, այդ ապրանքների փաթեթավորումները, պիտակները, որոնց վրա ապրանքային նշաններն օգտագործվում են ապօրինի, համարվում են կեղծ, նմանակված: Նշանների համեմատությունն ակնհայտ է դարձնում այն հանգամանքը, որ պատասխանողի կողմից օգտագործվող վերը նշված ապրանքային նշանը և «Գրանդ Քենդի» հայ-կանադական ՀՁ ՍՊԸ-ի անունով գրանցված համապատասխան ապրանքային նշանները, չնայած առանձին տարբերությունների առկայությանը, ընդհանուր առմամբ զուգորդվում են, առաջացնում են նույն պատկերի, բառի, գույների, դրանց համակցության, իմաստի ընկալման զգացողություն: Սպառողն որն առնչվել է «Գրանդ Քենդի» հայ-կանադական ՀՁ ՍՊԸ-ի նշաններով մակնիշված արտադրանքի հետ, չունենալով երկու նշանները համեմատելու հնարավորություն և մտապահելով «Գրանդ Քենդի» հայ-կանադական ՀՁ ՍՊԸ-ի համապատասխան նշանի պատկերը /դրա հիմնական տարրը/ օրինակ՝ բառը կամ իմաստն ընդգծող պատկերը /կամ տարրերը/, առաջնորդվելով ընդհանուր տեսողական տպավորությամբ, հետևյալ կարող է քննարկվող նշանները շփոթել: Իսկ դա ակնհայտորեն վկայում է պատասխանողի կողմից օգտագործվող վերը նշված ապրանքային նշանի և «Գրանդ Քենդի» հայ-կանադական ՀՁ ՍՊԸ-ի անունով գրանցված համապատասխան ապրանքային նշանների շփոթության աստիճան նմանության մասին: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1178-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ ապրանքային նշանի ապօրինի օգտագործման դեպքում քաղաքացիական իրավունքի պաշտպանությունը, բացի ապօրինի օգտագործման դադարեցման և վնասների փոխհատուցման պահանջներից, իրականացվում է նաև ոչնչացնելով ապրանքային նշանի կամ դրան շփոթելու աստիճան նման նշանի պատկերները, իսկ նախատեսված եղանակներն իրականացնելու անհնարինության դեպքում, բացառելով ապրանքային նշանի սեփականատիրոջը հետագայում որևէ վնաս պատճառելու հնարավորությունը, առանց որևիցե փոխհատուցման ոչնչացնելով ապօրինի ապրանքային նշանով մակնիշված ապրանքը և /կամ փաթեթը/: Հայտնել է նաև, որ պատասխանողի վարքագիծն ակնհայտորեն պարունակում է նաև անբարեխիղճ մրցակցության տարրեր: «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի համաձայն՝ «Անբարեխիղճ մրցակցությունն արգելվում է», «Անբարեխիղճ մրցակցություն է համարվում ձեռնարկատիրական գործունեության ցանկացած գործողություն կամ վարքագիծ, որը հակասում է սույն օրենքին կամ գործարար շրջանառության սովորույթներին, խախտում է մրցակիցների միջև կամ վերջիններիս ու սպառողների միջև բարեխիղճության՝ ազնվության, արդարության, ճշմարտության, անաչառության սկզբունքը», իսկ 12-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ «Ձեռնարկատիրական գործունեության ցանկացած գործողություն կամ վարքագիծ, որն առաջացնում է կամ կարող է առաջացնել շփոթություն այլ տնտեսվարող սուբյեկտի, նրա գործունեության կամ առաջարկած ապրանքների նկատմամբ, համարվում է անբարեխիղճ մրցակցության գործողություն»: Ընդ որում, ըստ նույն հոդվածի 2-րդ կետի «ա» ենթակետի, շփոթություն կարող է առաջացնել, մասնավորապես՝ գրանցված կամ չգրանցված ապրանքային նշանների նկատմամբ: Օգտագործելով նույնական կամ նմանակված նշաններ, սպառողին մոլորության մեջ գցելով ապրանքի և ապրանքն արտադրողի վերաբերյալ՝ պատասխանողը սպառողին հրամցնում է մի արտադրանք, որը հաճախ դիտարկվում է /կամ կարող է դիտարկվել/ որպես «Գրանդ Քենդի» հայ-կանադական ՀՁ ՍՊԸ-ի կողմից արտադրվող: Ակնհայտ է

պատասխանողի կողմից սպառողների շրջանում «Գրանդ Քենդի» հայ-կանադական ՀՁ ՍՊԸ-ի ճանաչումը շահադիտական նպատակներով օգտագործելու և «Գրանդ Քենդի» հայ-կանադական ՀՁ ՍՊԸ-ի մարկետինգային քաղաքականության պտուղներից օգտվելու դիտավորությունը: Հայտնել է, որ վերը շարադրվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ «Գրանդ Քենդի» հայ-կանադական ՀՁ ՍՊԸ-ի անունով գրանցված ապրանքային նշանների հետ նույնական կամ դրանց շփոթելու աստիճան նման նշանով մակնիշված արտադրանք թողարկելն ու իրացնելը պետք է որակվի նաև որպես ապրանքն արտադրողի վերաբերյալ սպառողին մոլորության մեջ գցելուն ուղղված գործողություն, իսկ պատասխանողի վարքագիծը՝ որպես անբարեխիղճ մրցակցության ակտ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 2-րդ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1178 հոդվածով, «Ապրանքային նշանների և ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածով, ինչպես նաև «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ կետով, դատարանից խնդրել է 1-ին՝ պարտավորեցնել պատասխանողին դադարեցնել «Գրանդ Քենդի» հայ-կանադական ՀՁ ՍՊԸ-ի բացառիկ իրավունքով պատկանող 7640, 8681, 9424 գրանցման համարներն ունեցող ապրանքային նշանների հետ նույնական կամ շփոթելու աստիճան նման «Ձյունիկ» նշանի ապօրինի օգտագործումը և 2-րդ՝ առանց որևիցե փոխատուցման ոչնչացնել ապօրինի օգտագործվող «Ձյունիկ» նշանով մակնիշված ապրանքի փաթեթի /տուփերի/ ամբողջ ծավալը :

Գործի դատաքննությամբ հայցվորի ներկայացուցիչ՝ Լիլիթ Ակոպովան հայցապահանջը հայցադիմումում նշված նույն իրավական հիմքերով ամբողջությամբ պնդեց:

3. Պատասխանողի իրավական դիրքորոշումը

Գործի դատաքննությամբ պատասխանողի ներկայացուցիչ «Արայիկ Էլիզա» ՍՊԸ-ի տնօրեն՝ Ջոիրաբ Աթոյանը դատարանին հայտնեց, որ հայցի դեմ չի առարկում, սակայն խնդրեց ժամանակ տրամադրել իրեն, որպեսզի հնարավորություն ունենա ընկերությունում առկա «Ձյունիկ» ապրանքային նշանի մնացած փաթեթավորված քաղցրավենիքը սպառել:

4. Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը

Գործի դատաքննությամբ և հայցվոր «Գրանդ Քենդի» հայ-կանադական ՀՁ ՍՊԸ-ի կողմից դատարան ներկայացրած Հայաստանի Հանրապետության մտավոր սեփականության գործակալության կողմից տրված թիվ 7640, 8681 և 9424 վկայագրերի ուսումնասիրությունից հիմնավորվեց, որ հայցվոր ընկերությունը «Ձյունիկ» բառային և «Ձյունիկ» համակցված ապրանքային նշանների նկատմամբ գրանցել է իր սեփականության իրավունքը /ապրանքներ (ծառայություններ) դաս 30/:

Դատաքննությամբ և գործին կցված պատասխանող ընկերության կողմից «Ձյունիկ» ապրանքային նշանով մակնիշված քաղցրավենիքի նմուշի ուսումնասիրությունից հիմնավորվեց նաև, որ պատասխանող «Արայիկ Էլիզա» ՍՊ Ը նկերությունը իր կողմից թողարկվող արտադրանքի տուփերի, փաթեթների ձևավորման ընթացքում օգտագործում է «Ձյունիկ» ապրանքային նշանով մակնիշված քաղցրավենիք: Նշված փաստը հիմնավորվեց նաև պատասխանող ընկերության ներկայացուցչի կողմից:

Պատասխանողը հայցադիմումի վերաբերյալ պատասխան դատարան չի ներկայացրել, ինչը համաձայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 95-րդ հոդվածի 5-րդ կետի, դատարանը կարող է գնահատել որպես պատասխանողի կողմից հայցվորի վկայակոչած փաստերի ընդունում :

5. Ղատարանի իրավական վերլուծությունը

Լսելով կողմերի ներկայացուցիչներին, հետազոտելով գործի ապացույցները, յուրաքանչյուր ապացույց գնահատելով բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ, ղատարանը հանգեց այն եզրակացության, որ հայցը հիմնավորված է և ենթակա է բավարարման⁹ հետևյալ պատճառաբանությամբ.

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1171-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ապրանքային և սպասարկման նշանները /այսուհետ՝ ապրանքային նշան/ այն նշաններն են, որոնցով որևէ անձի ապրանքները և ծառայությունները համապատասխանաբար տարբերվում են այլ անձի նույնատիպ ապրանքներից և ծառայություններից: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ ապրանքային նշանին իրավական պահպանություն տրամադրվում է օրենքով սահմանված կարգով՝ դրա գրանցման հիման վրա կամ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան: Իսկ նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ ապրանքային նշանի գրանցման փաստը և դրա նկատմամբ իրավունքը հաստատվում է վկայագրով:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1172-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ապրանքային նշանի սեփականատերը բացառիկ իրավունք ունի օգտագործելու և տնօրինելու իրեն պատկանող նշանը:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1178 հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ապրանքային նշանն ապօրինի օգտագործող անձը պարտավոր է դադարեցնել խախտումը և ապրանքային նշանի սեփականատիրոջը հատուցել պատճառված վնասը: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ ապրանքային նշանն ապօրինի օգտագործող անձը պարտավոր է ոչնչացնել ապրանքային նշանի պատրաստված պատկերները, ապրանքի կամ դրա փաթեթավորման վրայից հանել ապօրինի օգտագործվող ապրանքային նշանը կամ դրան շփոթելու աստիճանի նման նշանը, իսկ նշված կետով սահմանված պահանջները կատարելու անհնարինության դեպքում համապատասխան ապրանքը ենթակա է ոչնչացման օրենքով սահմանված կարգով:

«Ապրանքային և սպասարկման նշանների հայտերի ձևակերպման, ներկայացման և քննարկման կարգի» 92-րդ կետի համաձայն՝ նշանը համարվում է այն նշանին նույնական, եթե դրանք համընկնում են իրենց բոլոր տարրերով, դրանց փոխդասավորվածությամբ, զույներով և մնացած առանձնահատկություններով: Նշանը համարվում է այլ նշանին շփոթելու աստիճան նման, եթե այն ընդհանուր առմամբ զուգորդվում է դրա հետ /այսինքն՝ մարդու մոտ առաջացնում է նույն պատկերի, բառի, զույների, դրանց համակցության, իմաստի ընկալման զգացողություն/, չնայած առանձին տարբերությունների առկայությանը:

«Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի /այսուհետ՝ օրենք/ 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ապրանքային նշանի նկատմամբ բացառիկ իրավունքն առաջանում է դրա գրանցման պահից: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ապրանքային նշանի սեփականատերն ունի այն տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու, ինչպես նաև այլ անձանց կողմից դրա օգտագործումն արգելելու բացառիկ իրավունք: Առանց ապրանքային նշանի սեփականատիրոջ թույլտվության ոչ ոք իրավունք չունի օգտագործել Հայաստանի Հանրապետությունում պահպանվող ապրանքային նշանը: Իսկ նշված հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գրանցված ապրանքային նշանի սեփականատերը բացառիկ իրավունք ունի երրորդ անձանց առևտրային գործունեության ընթացքում արգելել առանց իր թույլտվության

ապրանքային նշանի կամ դրանով նշված ապրանքի պատրաստումը, կիրառումը, ներմուծումը, վաճառքը և դրա առաջարկը, ինչպես նաև այլ ձևերով տնտեսական շրջանառության մեջ մտցնելը կամ այդ նշանով նշված ապրանքի կամ ապրանքային նշանի նույն նպատակով պահեստավորումը և սույն օրենքի 22 հոդվածի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված գործողությունների իրականացումը, եթե այդ ապրանքային նշանը նույնական կամ շփոթելու աստիճան նման է իր ապրանքային նշանին և օգտագործված է այն ապրանքների նկատմամբ՝

ա) որոնց համար գրանցված է իր ապրանքային նշանը.

բ) որոնք նույնատիպ են այն ապրանքներին, որոնց համար գրանցված է իր ապրանքային նշանը:

Սույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ արգելվում է առևտրային գործունեության ընթացքում օգտագործել որևէ նշան, որը Հայաստանի Հանրապետությունում որոշակի ապրանքների նկատմամբ հանրահայտ ճանաչված ապրանքային նշանի վերարտադրությունը, նմանակումը կամ թարգմանությունն է և շփոթելու աստիճան նման է այդ նշանին, եթե առանց դրա սեփականատիրոջ թույլտվության օգտագործումն իրականացվում է՝

ա) նույն կամ նույնատիպ ապրանքների նկատմամբ.

բ) ոչ նույնատիպ ապրանքների նկատմամբ, ինչը մոլորեցնելով ստիպում է այդ ապրանքների և հանրահայտ ապրանքային նշանի սեփականատիրոջ միջև կապ ենթադրել, պայմանով, որ այդպիսի օգտագործումը կարող է վնաս հասցնել վերջինիս շահերին: Սույն դրույթները տարածվում են նաև այն դեպքերի վրա, երբ նշանի էական մասն այդպիսի հանրահայտ ապրանքային նշանի վերարտադրությունն է կամ շփոթելու աստիճան դրա նմանակումը: Նշված հոդվածի 4-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ ապրանքային նշանի սեփականատիրոջ բացառիկ իրավունքի խախտում (ապրանքային նշանի ապօրինի օգտագործում) է համարվում առանց նրա թույլտվության Հայաստանի Հանրապետության տարածքում քաղաքացիական շրջանառության մեջ ապրանքային նշանի կամ դրան շփոթելու աստիճան նման նշանի օգտագործումն այն ապրանքների նկատմամբ, որոնց անհատականացման համար գրանցված է ապրանքային նշանը կամ այդ ապրանքներին նույնատիպ ապրանքների նկատմամբ, այդ թվում՝ ապրանքային նշանի կամ դրան շփոթելու աստիճան նման նշանի կիրառումը (գետեղումը) և այլն :

Օրենքի 47-րդ հոդվածի համաձայն՝ ապրանքային նշանի կամ դրան շփոթելու աստիճան նման նշանի, ինչպես նաև տեղանվան կամ դրան շփոթելու աստիճան նման նշանի օգտագործումը, որը հակասում է սույն օրենքի 4-րդ և 41-րդ հոդվածների պահանջներին, առաջացնում է պատասխանատվություն՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Ղատաքնությանը և գործի նյութերով, ինչպես նաև դատարանին ներկայացված ապրանքային նշանների ուսումնասիրությունից, դատարանը հաստատված է համարում այն հանգամանքը, որ պատասխանող ընկերության կողմից որպես ապրանքային նշան օգտագործվող «Ձյունիկ» ապրանքային նշանով մակնիշված քաղցրավենիքը՝ չնայած առանձին տարբերությունների առկայությանը ըստ էության նույնական կամ շփոթության աստիճանի նման է հայցվոր «Գրանդ Քենդի» հայ-կանադական ՀՁ ՍՊԸ-ի անվամբ սեփականության իրավունքով գրանցված «Ձյունիկ» ապրանքային նշանին, որը հնարավորություն է տալիս սպառողի կողմից ընդհանուր տեսողական տպավորությամբ հեշտությամբ շփոթել:

Փաստորեն դատարանը հաստատված է համարում նաև այն, որ պատասխանողը առանց հայցվորի թույլտվության օգտագործել է հայցվոր ընկերության անվամբ գրանցված ապրանքային նշանը, որը դատարանի կողմից դիտվում է որպես ապրանքային նշանի սեփականատիրոջ բացառիկ իրավունքի խախտում /ապրանքային նշանի ապօրինի օգտագործում/:

	<p>Ղատարանը անդրադարձնալով պատասխանողի ներկայացուցչի միջնորդությանը՝ ընկերությունում առկա «Ձյունիկ» ապրանքային նշանի մնացած փաթեթավորված քաղցրավենիքը սպառելու նպատակով ժամանակ տրամադրելուն, գտնում է , որ նշված միջնորդությունը սույն գործի շրջանակներում ենթակա չէ քննարկման՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:</p> <p>Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 130-132, 140, 1401 հոդվածներով՝ դատարանը Վ Ճ Ռ Ե Ց</p> <p>«Գրանդ Քենդի» հայ-կանադական համատեղ ձեռնարկություն սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հայցն ընդդեմ «Արայիկ Էլիզա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության՝ ապրանքային նշանների ապօրինի օգտագործումը դադարեցնելու և ապօրինի օգտագործվող ապրանքային նշաններով մակնիշված ապրանքի փաթեթի ամբողջ ծավալը ոչնչացնելու պահանջների մասին, բավարարել:</p> <p>Պարտավորեցնել պատասխանող «Արայիկ Էլիզա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը դադարեցնել հայցվոր՝ «Գրանդ Քենդի» հայ-կանադական համատեղ ձեռնարկություն սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը բացառիկ իրավունքով պատկանող 7640, 8681, 9424 զրանցման համարներն ունեցող ապրանքային նշանների հետ նույնական կամ շփոթելու աստիճան նման «Ձյունիկ» նշանի ապօրինի օգտագործումը և առանց որևիցե փոխհատուցման ոչնչացնել ապօրինի օգտագործվող «Ձյունիկ» նշանով մակնիշված ապրանքի փաթեթի /տուփերի/ ամբողջ ծավալը:</p> <p>Ղատական ծախսերի հարցը համարել լուծված:</p> <p>Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո:</p> <p>Վճիռը կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակումից հետո մեկ ամսվա ընթացքում:</p> <p>Վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո կանոնի չկատարելու դեպքում, այն կկատարվի դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:</p>
Ղատական ակտի ամսաթիվը:	29-07-2009
Ամսաթիվ:	31-08-2009
Այլ նշումներ:	
Գործը, որոշումը հանձնվել է գրասենյակ:	08-10-2009
Էջերի քանակը:	93
Գործին կից նյութեր:	
Այլ նշումներ:	
Ամսաթիվ:	14-10-2009
Էջերի քանակը:	93
Գործին կից նյութերը:	
Գործն ուղարկվել է:	

Ուր:	
Գրության համարը:	
Գործը ստացվել է:	
Ներկայացվել է դիմում միջնորդություն:	